

ԶԱՐՏՈՆԿ

Օրաթերթ

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMENIEN **زارتونك جريدة سياسية أرمنية**
 74րդ Տարի, թիւ 31 (20,362) ԿԻՐԱԿԻ, 11 ԳԵԿՏԵՄԲԵՐ 2011 8 էջ 1000 Լ.Ո.

Զարտոնկ -ը կարելի է կարդալ նաեւ համացանցի վրայ հետեւեալ հասցեով՝
www.zartonkdaily.com
 Ինչպէս նաեւ ձեր անհատական թղթակցութիւններն ու ծանուցումները կրնաք փոխանցել խմբագրութեանս հետեւեալ հասցէներուն՝
 e-mail: info@zartonkdaily.com
 zartonkadl@gmail.com
 zartonkdaily@yahoo.com
 P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon
 Tel./Fax: +961 1 444225

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԼԷՅՄԱՆԻ ՀՐԱԺԵՇՏԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ՆՍՏԱՎԱՅՐԷՆ ՆԵՐՍ

Հայաստանի նախագահին նստավայրին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական այցով Հայաստան ժամանած Լիբանանի Հանրապետութեան նախագահ Միշէլ Սըլէյմանի հրաժեշտի արարողութիւնը:



Ինչպէս կը հաղորդէ Հայաստանի նախագահի մամուլային ծառայութիւնը, մինչ այդ երկու երկիրներու ղեկավարները կարճատեւ առանձնագրոյցի ընթացքին ամփոփած են այցի արդիւնքները: Նախագահ Սերժ Սարգսեան ընդգծած է, որ Լիբանանի նախագահին հետ հանդիպման իբր արդիւնք անգամ մը եւս համոզուած է, որ երկու բարեկամ

երկիրները ունին բաւականաչափ ընդհանուր հետաքրքրութիւններ, խնդիրներ ու շփման եզրեր, նաեւ՝ այդ բարեկամութիւնը մշտապէս ամրապնդելու պարտաւորութիւն: Հանրապետութեան ղեկավարին խօսքով, նախագահ Միշէլ Սըլէյմանի այցը Հայաստան քայլ էր այդ ուղղութեամբ: Սերժ Սարգսեան յոյս յայտնած է, որ Լիբանանի նախագահին հետ մօտ ապագային կրկին կը հանդիպին՝ այդպիսով եւս մէկ անգամ հայ-լիբանանեան ներկայ ջերմ յարաբերութիւնները մշտապէս ամրապնդելու տուեալ հաղորդելով շահագրգիռ բոլոր կողմերուն:

Լիբանանի Հանրապետութեան նախագահ Միշէլ Սըլէյման շնորհակալութիւն յայտնած է ջերմ ընդունելութեան համար եւ նշած, որ լիբանանեան կողմը հետեւողական կ'ըլլայ այցի ընթացքին ստորագրուած փաստաթուղթերը կեանքի կոչելու հարցով, որուն համար պատասխանատու բոլոր պետական մարմիններուն համապատասխան յանձնարարականներ պիտի տրուին:

Միշէլ Սըլէյման եւս համոզուած ընդգծած է, որ իր պաշտօնական այցը Հայաստան լրացուցիչ խրթան կը հանդիսանայ բոլոր ոլորտներէն ներս հայ-լիբանանեան յարաբերութիւնները աւելի գործօն դարձնելու եւ ամրապնդելու համար:

ՖԻՆԻԼ-Ի ՈՒԺԵՐՈՒՆ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԶՈՎԱՏԻՆ ԴԵՍ ԴԱՅԹՈՒՄԸ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՃԱԲ ԲՈՒՈՐԻՆ ԿՈՂՄԷ

Լիբանանեան բանակին կողմէ հրապարակուած հաղորդագրութիւն մը նկատել տուաւ, որ Սուրի մէջ արձանագրուած պայթումը, որ թիրախ դարձուցած էր հարաւային Լիբանանի մէջ տեղակայուած ՖԻՆԻԼ-ի միջազգային խաղաղապահ ուժերուն մաս կազմող ֆրանսական զօրամասի մէկ փոխադրակառքը, պատահած է իբրեւ արդիւնք աղբակոյտի մը մէջ գետնորած ականի մը:

Հանրապետութեան նախագահ Միշէլ Սըլէյման, որ պաշտօնական այցելութեամբ կը գտնուի Հայաստան, Երեւանէն կատարած իր յայտարարութիւններուն մէջ նշեց, որ ՖԻՆԻԼ-ին մաս կազմող ֆրանսական զօրամասին դէմ գործուած այս յարձակումին նպատակն է գայն մղել Լիբանանէն հեռանալու եւ արգելակել անոր խաղաղապահ առաքելութիւնը:

Իր կարգին խորհրդարանի նախագահ Նեպիի Պըրրի խըստիւ դատապարտեց պայթումը անելցնելով, որ հարաւային Լիբանանի մէջ ՖԻՆԻԼ-ը թիրախ դարձուցած ահաբեկչական այդ արարքը կը միտի Լիբանանը վերածել անապահով վայրի մը եւ ազգային անվտանգութիւնը հարուածել:

Միւս կողմէ վարչապետ Նեժիպ Սիքաթի դատապարտեց ՖԻՆԻԼ-ի դէմ գործուած պայթումը: Վարչապետարանին մէջ ապահովական ընդարձակ նիստի մը նախագահելու ընթացքին վարչապետ Սիքաթի շեշտեց, որ Լիբանան պետական եւ ժողովրդային մակարդակի զօրակցութիւն կը ցուցաբերէ ՖԻՆԻԼ-ի միջազգային խաղաղապահ ուժերուն նկատմամբ:

ԵՐՐՈՊԱՅԻ ԴԵՎԱՎԱՐՆԵՐԸ ԿԸ ՀԱՄԱՁԱՅՆԻՆ ԵՐՐՈՆ ՓՐԿԵԼՈՒ ԲԱՅԻ ԲՐԻՏԱՆԻԱՅԷՆ

Պրիւքսելի մէջ հաւաքուած Երոպայի ղեկավարները նոր ծրագիր մը մշակեցին Երրոն փրկելու, որուն շուրջ համաձայնեցան Երրոյի գօտիի 17 եր-



կիրները, ինչպէս նաեւ այլ 6 երկիրներ, որոնք Երոպական Միութեան կ'անդամակցին, մինչ մէկ երկիր այս համաձայնութիւնը չընդունեց, որ Բրիտանիան է:

Բրիտանիան Երրոյի գօտիին մէջ չի մտնել, սակայն անոր համաձայնութիւնը կարելոր էր՝ Երոպական ընտանիքի շարքերը ամրապնդելու առումով: Բրիտանիան իր այս կեցուածքը պատճառաբանեց ըսելով, թէ յատուկ ապահովութիւն կ'ուզէ Լոնտոնի դրամական եւ առեւտրական փողոցը

ՀՈՒԱՆՏԱ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ ԿԸ ԽՆԴԻԷ ԻՆՏՈՆԵՉԻԱՅԷՆ 1947-ԻՆ ԿԱՏԱՐԱԾ ԻՐ ԶԱՐԴԻՆ ՀԱՄԱՐ

Հոլանտա պաշտօնապէս ներողութիւն խնդրեց Ինտոնեզիայէն՝ ճաւա կղզիին վրայ իր գաղթատիրական ուժերուն կողմէ 1947-ին գործադրուած հարիւրաւոր գիւղացիներու ջարդին դէմ, անոր 64-ամեակին առիթով:

Ինտոնեզիոյ մօտ Հոլանտայի դեսպան Ճիրտ Տի Չուան, ճաւա կղզիին արեւմտեան կողմը գտնուող Ռաուաժիտի գիւղը այցելեց, ուր ջարդը տեղի ունեցած էր եւ ըսաւ. «Յոյսով եմ, որ միասնաբար բոլոր ճիգերով ապագային խորապէս եւ արդիւնաւետ կերպով կը գործակցինք մեր երկիրներու միջեւ»: Դեսպանը իր կառավարութեան անունով ներողութիւն խնդրեց այն ողբերգութեան համար, որ 9 Դեկտեմբեր 1947-ին պատահեցաւ Ռաուաժիտիի մէջ:

Այդ թուականին հոլանտական գաղթատիրական զինուորներ Ռաուաժիտի գիւղը գտնուած էին, անկախութեան մարտիկ մը փնտռելով, որպէսզի գայն ձերբակալեն՝ հոլանտական զինուորականներու վրայ յարձակումներ գործելու ամբաստանութեամբ: Երբ գիւղին բնակիչները մերժեցին ցոյց տալ անոր թաքստոցը, հոլանտացի զինուորներու կողմէ հրացանազարկ եղան, որուն հետեւանքով 431 գիւղացիներ սպաննուեցան:

Երոպական Միութիւնն մտնել փորձող Թուրքիան դաս պիտի առնէ՞ Հոլանտայէն...: «2.»

ԱՇԹԸՆ ԿԸ ԶՕՐԱԿՑԻ ՄԱԿ-Ի ԾԻԳԵՐՈՒՆ ԱՇՐԱՖ ԳԱՂԹԱԿԱՅԱՆԸ ՓԱԿԵԼՈՒ

Եւրոպական Միութեան արտաքին քաղաքականութեան եւ ապահովութեան պատասխանատու Զաթրին Աշթըն իր զօրակցութիւնը յայտնեց ՄԱԿ-ի ճիգերուն՝ Պաղտատի հիւսիս-արեւելքը գտնուող իրանեան ընդդիմադիր Մուճահիտին հալը կազմակերպութեան Աշրաֆ գաղթականը փակելու, կոչ ուղղելով բոլոր կողմերուն համագործակցելու, որպէսզի կարելի ըլլայ ընդունելի լուծում մը գտնել:

Աշթընի գրասենեակէն հաղորդուեցաւ, թէ ան Իրաքի ՄԱԿ-ի յատուկ ներկայացուցիչ Մարթին Զոպըրի հետ հանդիպած է եւ իր ամբողջական նեցուկը յայտնած այն բոլոր ճիգերուն, որոնք կը գործադրուին Աշրաֆ գաղթականին հարցը լուծելու:

Ան շեշտեց, թէ կարելոր է, որ գաղթականին մարդոց ապահովութիւնը գլխաւոր մտահոգութիւնը ըլլայ եւ յիշեց ՄԱԿ-ի գաղթականաց հարցերու գլխաւոր պատասխանատու Անթոնիս Կաթիէրէսի ճիգերը՝ կազմակերպուած ձեռով այս հարցը լուծելու, բոլորովին յարգելով մարդկային իրաւանց եւ միջազգային օրէնքները:

Աշթըն ըսաւ, թէ «շեշտեցի խնդրոյ առարկայ բոլոր կողմերուն, որոնց շարքին Իրաքի արտաքին գործոց նախարար Յոշիար Չիպարիին, որ ամբողջովին թիկունք կանգնին ՄԱԿ-ի ճիգերուն, որ լաւագոյն եւ միակ միջոցն է հարցին լուծման, ինչպէս նաեւ հասկացողութիւն եւ համագործակցութիւն ցուցաբերելու լուծման հասնելու»:

Իրաքի կառավարութիւնը որոշած է փակել Աշրաֆի գաղթականը այս տարեվերջին, ուր 3400 անդամներ կան Իրանի ընդդիմադիր Մուճահիտին հալը կազմակերպութենէն:

ԵՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԿՈՉ ԸՐԱԾ ԵՆ ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆՈՒԱՐԻ ԱՒԱՐՏԸ ԽՍԱՍՏԵԼ ԻՐԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

Եւրոպական Միութեան առաջնորդները կոչ ըրած են մինչ Յունուարի աւարտը խստացնել Իրանի դեմ պատժամիջոցները՝ ստիպելով անոր հրաժարիլ միջուկային ծրագիրէն:

Եւրոպական Միութեան արտաքին գործոց նախարարներուն յանձնարարուած է մշակել պատժամիջոցներու ընդլայնման հարցը, ներառեալ դրամատնային հաշիւներու սառեցումը եւ մուտքի արտօնազրկներու սահմանափակումները այն անձերուն, որոնք մասնակից են միջուկային մշակումներուն: Պիտի քննարկուին նաեւ լրացուցիչ պատժամիջոցներ:

Սակայն Իրանի հում նաֆթի ներկրման վրայ արգելքի հաստատման մասին տակաւին խօսք չկայ:

ԻՍՐԱՅԷԼԻ ՌԱԶՄԱՕՊԱՅԻՆ ՈՒԺԵՐԸ ՀԱՐՈՒԱԾԱԾ ԵՆ ԿԱԶԱՅԻ ՀԱՏՈՒԱԾԸ



Իսրայէլի ռազմաօդային ուժերը հարուածած են Կազայի հատուածին մէջ գտնուող նպատակակէտերը՝ ի պատասխան պաղեստինցի յարձակողականներու հրթիռային գնդակոծութեան, ինչպէս կը յայտնէ «Ճերուսալէմ Փոսթը» յղում ընելով Իսրայէլի պաշտպանութեան բանակի ներկայացուցիչներու

պաշտօնական յայտարարութեան: Ռազմաօդային հարուածի ընթացքին արձանագրուած է նպատակակէտերու ոչնչացում:

Քննարկութիւնը Իսրայէլի պատասխանն էր «Կազայի հատուածէն Համասի ահաբեկչական գործողութիւններուն», կը նշեն զինուորականները:

Իսրայէլի լրատուամիջոցները իրենց հերթին յայտնեցին, որ Իսրայէլի հարաւը 12 հրթիռներ ինկած են, սակայն զոհեր եւ ւերածութիւններ չկան:

ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՓՈԽԱՆԱԿԱԾ ԵՆ

Հայաստանի նախագահի նստավայրին մէջ ողջունելով Լիբանանի նախագահը՝ Սերժ Սարգսեան նշած է, որ երկու ժողովուրդներու աւանդական բարեկամութիւնը կը պարտաւորեցնէ առաւել զարգացնել երկկողմ յարաբերութիւնները:



Հայ-լիբանանեան բարեկամական յարաբերութիւններու ամրապնդման եւ Հայաստանի ու Լիբանանի համագործակցութեան խորացման ուղղուած գործունեութեան համար՝ նախագահ Սերժ Սարգսեան Լիբանանի նախագահ Միշէլ Սըլէյմանը պարգևատրած է Պատուոյ շքանշանով:

Իր հերթին Լիբանանի նախագահ Միշէլ Սըլէյման՝ նախագահ Սերժ Սարգսեանը պարգևատրած է Լիբանանի արժանիքներու բարձրագոյն աստիճանի շքանշանով:

Սըլէյման շնորհակալութիւն յայտնած է ջերմ հիւրընկալութեան համար եւ նշած, որ լիբանանեան կողմի ցանկութիւնն է երկու երկիրներու միջեւ յարաբերութիւնները բարձրացնել նոր մակարդակի:

Նախագահ Սըլէյման կարելոր համարած է լիբանանահայ համայնքի դերը հայ-լիբանանեան յարաբերութիւններու ամրապնդման գործին մէջ, եւ իր երկրին քաղաքական, տնտեսական, մշակութային, կառավարման եւ այլ բնագաւառներէն ներս:

ԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ԱԼ ՔԱՅԻՏԱ ՑԱՆՑԸ ԾՐԱԳՐԱԾ ԷՐ ՊԱՅԹԵՑՆԵԼ ԹՈՒՐԹԻՈՅ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ ԸՍՏ ԹՐՔԱԿԱՆ ԼՐԱՏՈՒԱՄԻՋՈՑՆԵՐՈՒ

Թուրքիոյ անվտանգութեան ուժերու աշխատակիցները ձերբակալած են Ալ Զայիտա միջազգային ահաբեկչական ցանցի 11 անդամներ: Ազրպէյճանական «Trend.az» կայքը վկայակոչելով թրքական լրատուամիջոցները կը հաղորդէ, որ այդ ահաբեկիչները ծրագրած էին պայթեցնել Թուրքիոյ խորհրդարանի շէնքը:



Ալ Զայիտայի թրքական բջիջի անդամներու տուները խուզարկելու ժամանակ յայտնաբերուած է 700 քկ պայթուցիկ նիւթ, զոր ահաբեկիչները պիտի օգտագործէին Թուրքիոյ խորհրդարանի շէնքը եւ Անքարայի մօտ Միացեալ Նահանգներու դեսպանատունը պայթեցնելու համար:

Քննչական մարմինները պարզած են, որ Ալ Զայիտայի անդամները Թուրքիա մեկնած են 11 Յուլիս 2011-ին եւ չորս ամիսներ ահաբեկչական գործողութիւններու իրականացման պատրաստութիւն անցուցած: Կը հաղորդուի, որ ահաբեկիչները պիտի յարձակէին նաեւ Անքարայի եւ Պոլսոյ քրիստոնեական եկեղեցիներուն վրայ:

ԵՐԲ ԵԳԻՊՏԱՑԻ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԸ «ՀԱՅ ԴԱՏ»Ի ԴԱՍ ԿՈՒ ՏԱՆ ԹՈՒՐՔԵՐՈՒՆ

Գահիրեի համալսարանի Հայագիտական Ուսումնասիրություններու Կեդրոնը, համագործակցությամբ Եգիպտոսի մեջ Հայաստանի Հանրապետության դեսպանատան, 14-15 Նոյեմբերին կազմակերպած էր հերթական միջազգային գիտաժողովը՝ «Հայաստանը Արեւելեան եւ Արեւմտեան Աղբիւրներուն մէջ Դարերու Ընթացքին» նիւթով. անոր մասնակցած էին պատմաբաններ եւ մասնագետներ Հայաստանէն, Լիբանանէն, Սուրիայէն եւ Եգիպտոսէն:

Ընդգծելի պատկերներ սկսան, երբ նիստերու աւարտին քննարկման պահուն թուրք եւ ազերի ուսանողներ ռիսակալ հարցումներ ուղղեցին գեկուցաբերներուն:

Այդ ուսանողները հաւանաբար ներկայացուցիչներն էին իրենց երկիրներուն. անոնք պահանջեցին գիտաժողովին թուրքերու ներկայութիւնը, Հայաստանի եւ հայերու մասին «սուտ» եւ «թերի» տեղեկութիւններու սրբագրումը, հասնելով մինչեւ «հայկական կողմէ ազերիական հողերու գրաման» թեմային:

Եւ ահա այս պահուն էր, որ եգիպտացի պատմաբանները զինուած հայկական թեմաներու շուրջ իրենց ամբարած տուեալներով, գիտական հիմքերու վրայ պատասխանելու պատրաստակամութիւնը ստանձնեցին՝ ուղղակի դաս տալով թուրքին ու ազերիին:

Երկրորդ պատկերը կը բովանդակէ եգիպտացի ուսանողներ, որոնք համոզուած ներկայացուած նիւթերով հարցեր տուին, թէ իրենք ի՞նչ պէտք է ընեն հայկական հարցի ճշմարտութիւնը ճանաչելի դարձնելու համար:

Իսկ երրորդ պատկերը կապուած է վերջերս Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան շքանշանով պարգեւատրուած եգիպտացի պատմաբան դոկտ. Սոհամմատ Ռիֆաաթ Իմամի հետ. անոր պատրաստած ուսանողները արդէն կը տիրապետեն հայկական թեմաներու եւ կը մասնակցին նման գիտաժողովներու:

Հակառակ անոր, որ գիտաժողովը եզրափակուեցաւ շարք մը առաջարկներով, սակայն այս երեք պատկերները մեզ կը յանգեցնեն այլ թելադրանքներու եւ հաստատումներու, թէ գիտաժողովը իր նպատակին ծառայած է, որովհետեւ եգիպտացի պատմաբանները Հայ դատի դաս տուին թուրքերուն: Սակայն կայ նաեւ այլ կողմ մը. արդեօք մենք ուսանողներ կը գործուղե՞նք որոշ գիտաժողովներու, որպէսզի հարցադրումներ ներկայացնեն այնտեղ:

Աւելի կարեւոր առաջարկը այն է, որ հայագիտութեան նկատմամբ հետաքրքրութիւնը աւելցած է Եգիպտոսի գիտական շրջանակներուն մէջ, ինչ որ մեզ կը մղէ մեծ թիւով արաբ հայագետներ պատրաստելու եւ պահելու անհրաժեշտութեան գիտակցելու. սակայն որքանով աշխատանք կը տարուի մեր Դատը պաշտպանողներ պատրաստելու, բան մը, որ կը կազմէ գիտաժողովէն բխած ժխտական երեւոյթը:

ԹՈՒՐՔԻԱՆ ԴԺԳՈՐ Է ՖՐԱՆՍԱՑԻ ՕՐԵՆՍԴԻՐՆԵՐԸ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը հաղորդագրութիւն տարածեց, որով դժգոհութիւն յայտնեց Ֆրանսայի Ազգային Ժողովի իրաւական հարցերով յանձնաժողովի կողմէ 7 Դեկտեմբերին ընդունուած օրինագիծին առնչութեամբ: Այս մասին կը հաղորդէ «Ճումհուրիյէթ» օրաթերթը:

Թուրքիոյ արտաքին քաղաքական գերատեսչութիւնը յոյս յայտնեց, որ թուրք-ֆրանսական յարաբերութիւնները վնասող այսպիսի քայլերը չեն շարունակուիր եւ Ֆրանսան կառուցողական ներդրում կ'ունենայ, որպէսզի Հայաստանի ու Թուրքիոյ միջեւ առկայ պատմական բնոյթի տարածայնութիւնները հարթուին երկխօսութեան ճանապարհով:

Ֆրանսայի Ազգային Ժողովի իրաւական հարցերով յանձնաժողովը 7 Դեկտեմբերին ընդունեց պատգամաւոր Վալերի Պուայէի ներկայացուած օրինագիծը, որով Հայոց Յեղասպանութեան Ժխտումը քրեօրէն հետապնդելի կը համարուի: Այս օրինագիծը վերջնականօրէն ուժի մէջ մտնելու պարագային՝ Հայոց Յեղասպանութիւնը ժխտողները ստիպուած պիտի ըլլան կամ վճարել 45,000 եւրօ տուգանք կամ մէկ տարի բանտարկուիլ:

ԱՋՐՊԵՅՃԱՆԻ ՄԷՋ ԿՐ ԳԻՏԱԿՑԻՆ ՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԿՐՆԱՅ ՓՈՒՍՈՒԻԼ Ի ՎՆԱՍ ԻՐԵՆՑ

Մինչեւ վերջին ժամանակներս ազրպէյճանական կողմը «վտանգ» կը համարէր իրավիճակի պահպանումը: Այսօր թելուգ վերլուծաբանական մակարդակով Ազրպէյճանի մէջ կը գիտակցին, որ անկախ կրնայ փոփոխուիլ Նոյնիսկ ի վնաս իրենց: Ասիկա արդեօք կը նշանակէ, որ Պաքուն ինք կը դառնայ իրավիճակի պահպանմամբ շահագրգռուած կողմ:

Այդ մասին ի հարկէ ուղղակիօրէն չ'ըսուիր: Բայց Վիլնիւսի մէջ արտաքին գործոց նախարար Մամետեարով կրկին առաջարկած է «խաղաղութեան համապարփակ պայմանագրի քննարկումներ սկսելու» մասին: Մամետեարով «յիմար» չէ: Ան կը հասկնայ, որ եթէ կարգաւորման սկզբունքներու համաձայնեցման բանակցութիւնները գրեթէ տասը տարի տեւելով որեւէ արդիւնքի չեն յանգած, ուրեմն «համապարփակ պայմանագրի» վրայ հարկ պիտի ըլլայ աւելի մեծ ջանքեր եւ ժամանակ ներդնել:

Ըստ երեւոյթին այսպիսի հեռանկարի առարկայական զգացողութիւնն է պատճառը, որ մինչեւ վերջերս միջնորդներու հետ «վերջնագրի լեզուով» հաղորդակցուող Իլհամ Ալիեւը, արտաքին գործոց նախարար Մամետեարովը լիազօրած է Վիլնիւսի մէջ հաստատելու «մօտ ժամանակներս» եւս բարձր մակարդակի հանդիպման մը իր համաձայնութիւնը:

Ենթադրելի է, որ միջնորդներն ու հայկական կողմը Ազրպէյճանին եւս մէկ հնարաւորութիւն կու տան՝ քաղաքական պատասխանատուութիւն եւ կամք դրսեւորելու, ճանչնալու Արցախի ժողովուրդին ինքնորոշուածութեան եւ անկախ պետութիւն ստեղծած ըլլալու փաստը ու ճանապարհ բանալու, որպէսզի կողմերը հետաքրքրող մնացած հարցերը քննարկուին փոխ-վստահութեան մթնոլորտի մէջ: Հակառակ պարագային ատիկա պիտի ընեն «արտաքին խաղացողները», ինչպէս միջնորդներուն կ'անուանէ ազրպէյճանցի վերլուծաբանը:

ԵՐՐՊԱՅԻ ԴԵԿԱՎԱՐՆԵՐԸ ԿՐ ՀԱՄԱՉԱՅՆԻՆ...

(Ծարունակուած Ա. Էջէն)

պաշտպանելու, Եւրոյի փրկութեան համաձայնագրին իր համեմատութեան փոխարէն:

Եւրոպական շատ մը երկիրներ Բրիտանիան ամբաստանեցին իր պահանջը անտեղիօրէն մեծցնելուն համար, իսկ ուրիշներ կասկած յայտնեցին Բրիտանիոյ վարչապետ Տէյվիտ Քամերոնի ազդարարութեան, թէ պիտի ձախողնէ եւրոպացիներուն ճիգերը՝ Եւրոն վերիվայրումներէն դուրս բերելու: Եւրոպական շատ մը երկիրներ զգուշացուցին, որ եթէ Քամերոն գործադրէ իր ազդարարութիւնը, Եւրոյի գօտիին 17 երկիրներով համաձայնութիւնը պիտի սահմանափակուի:

Այնպէս կ'երեւի, թէ եւրոպական երկիրներ պիտի չընդունին Բրիտանիոյ յատուկ կարգավիճակ շնորհել այս համաձայնագրին մէջ, որովհետեւ այդ մէկը իր ազդեցութիւնը պիտի ունենայ Եւրոպայէն դուրս ալ:



Հ.Բ.Ը.Մ.-ի Լիբանանի Տիկնանց Համախմբումը

Սիրով կը հրաւիրէ Ձեզ
Աերկայ գտնուելու իր տարեկան
«Հայկական Աւանդական Կադանդի Պագար»ի
Բացումը պիտի կատարէ՝
Տիկն Սեդա Տեմիրճեան

Ուրբաթ, 9 Դեկտեմբեր 2011, կ.ա. ժամը 11:00-ին

Պագարը կը շարունակուի մինչեւ Կիրակի երեկոյ,
11 Դեկտեմբեր 2011, կ.ա. ժամը 10:00-էն կ.ե. ժամը 8:00
Հ.Բ.Ը.Միութեան Տեմիրճեան Կեդրոն, Անթիլիաս
Կառատունը ապահովուած է

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳԱՐԵԳԻՆ Բ. ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ ԵՒ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՇՔԱՆՇԱՆ ՇՆՈՐՀԵՑ ԲՐԻՏԱՆԱՀԱՅ ԲԱՐԵՐԱՐ ՎԱՐՊԱՆ ՈՒՉՈՒՆԵԱՆԻՆ

Առաջին անգամ Միացեալ Թագաւորութեան հայ համայնքի ներկայացուցչին շնորհուեցաւ Զայ Առաքելական Եկեղեցւոյ բարձրագոյն պարգեւը:

Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ.-ի կարգադրութեամբ հայրապետական կոնդակով եւ Սուրբ Ներսէս Շնորհալի շքանշանով բազմամեայ ազգանուէր գործունէութեան համար պարգեւատրուեցաւ Սփիւռքի եւ Զայաստանի մէջ ճանչցուած բարերար, Լոնտոնի Թէքէեան Թրասթի (ԼԹԹ) պատուաւոր քարտուղար, «Թէքէեան Կեդրոն» հիմնադրամի (ԹԿՀ) նախագահ Վարդան Ուզունեանը:

Շնեւով Մայր Զայրենիքէն հեռու՝ Վարդան Ուզունեան դաստիարակուած ու կրթուած է հայկական ոգիով, հայրենասիրութեամբ ու սիրով դէպի ազգային մշակոյթը: Կանուխ տարիքէն ան գիտակցեցաւ ազգային ինքնութեան պահպանման կարեւորութեան եւ հետեւեցաւ ընտանեկան երկարամեայ աւանդոյթին՝ օգտակար ըլլալ եւ ծառայել սեփական ժողովուրդին: Ուսանողական տարիներէն սկսեալ Վ. Ուզունեան բեղուն գործունէութիւն կը ծաւալէ հայ համայնքներու ազգային եւ հոգեւոր կեանքին մէջ:

Պրն. Ուզունեան մեծ ջանքեր ներդրած է ի բարօրութիւն լիբանանահայ համայնքի: Սորվելով Պէյրութի ԶԲՄ Յովակիմեան Մանուկեան երկրորդական վարժարանին մէջ, Վարդան Ուզունեան որպէս ուսանողական խորհուրդի նախագահ, նախաձեռնեց միջ-համալսարանական մշակութային փառատօն, որ կը միաւորէր հայկական բոլոր երկրորդական վարժարաններու՝ տարբեր կուսակցութիւններ ներկայացնող ուսանողները եւ կը կանխէր միմեանց հանդէպ թշնամական վերաբերմունքը: Իսկ մշակութային փառատօնը վերածուեցաւ ամենամեայ աւանդոյթի եւ շարունակուեցաւ աւելի քան երկու տասնամեակներ, որոնց ընթացքին հայ ուսանողներու միջեւ ստեղծուեցան բարեկամական յարաբերութիւններ, որոնք մինչ այդ երբեւէ չէին եղած:



Վարդան Ուզունեան մեծ ներդրում ունեցած է նաեւ Եթովպիոյ եւ Մեծն Բրիտանիոյ հայ համայնքներու բարգաւաճման գործին մէջ՝ կազմակերպելով տարատեսակ մշակութային, հասարակական եւ մարզական միջոցառումներ: Մեծ նուիրումով ան գործունէութիւն ծաւալեց ԶԲՄ-ի, Թէքէեան Մշակութային Միութեան, ՌԱԿ-ի եւ ազգային այլ հաստատութիւններու մէջ:

Վ. Ուզունեան Լոնտոնի Թէքէեան Թրասթի հիմնադիրներէն է եւ անոր պատուաւոր քարտուղարը: ԼԹԹ ամրապնդած է Զայաստան-Սփիւռք կապերը մշակոյթի միջոցով: Ան Զայաստանէն Մեծն Բրիտանիա կը հրաւիրէր եւ բազմաթիւ ելոյթներ կը կազմակերպէր Զայաստանէն հոն հրաւիրուած մշակոյթի տարբեր վարպետներու, որոնց շարքին պարային եւ երգի համոյթներ, թատերական խումբեր եւ երաժիշտներ: Կը կազմակերպէր նաեւ ցուցահանդէսներ եւ նոյնիսկ դասախօսութիւններ: ԼԹԹ կ'ընդգրկէր նաեւ «Զայկական Երաժշտութեան Վարժարանը», «Արաքս» պարային համոյթը, որ գործեց շուրջ եօթ տարիներ, «Էրեբունի» երկշաբաթաթերթը, այնուհետեւ ամսագիրը, որ Լոնտոնի մէջ գործեց աւելի քան տասնհինգ տարիներ: Երկար տարիներ անդամակցելով Եկեղեցական Խորհուրդին, ապա

ընտրուելով նաեւ նախագահ՝ Պրն. Ուզունեան անձնուիրաբար ծառայած է յանուն Բրիտանիոյ հայկական Թեմի բարգաւաճման:

Վարդան Ուզունեան նաեւ Զայաստանի «Թէքէեան Կեդրոն» հիմնադրամի հիմնադիրներէն է եւ անոր նախագահը: Թէքէեան Կեդրոնը կը խորհրդանշէ աշխարհասփիւռ հայերու միաւորումը եւ կը ծառայէ յօգուտ ազգային մշակոյթի, կրթութեան եւ գիտութեան զարգացման:



Քնահատելով Վարդան Ուզունեանի վաստակը ազգային եւ եկեղեցական կեանքին մէջ, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ. անոր շնորհեց հայ եկեղեցւոյ բարձրագոյն պարգեւը:

Պարգեւատրման արարողութիւնը տեղի ունեցաւ 27 Նոյեմբերին Լոնտոնի Սբ. Եղիշէ Եկեղեցւոյ մէջ՝ օրուայ առիթին նուիրուած պատարագէն յետոյ, աւելի քան 300 հիւրերու մասնակցութեամբ: Տէր հայր Ներսէս Ներսէսեան յաւուր պատշաճի պատարագ մատուցելով անդրադարձաւ անհատի անշահախնդիր գործունէութեան՝ ի նպաստ հասարակութեան զարգացման ու բարգաւաճման: Տէր հայրը խօսեցաւ նաեւ տարիներու ընթացքին Վարդան Ուզունեանի հետ համագործակցութեան մասին, որուն նպատակն է հայ համայնքի մշակութային կեանքի զարգացումը: Այնուհետեւ ան կարդաց հայրապետական կոնդակը, որմէ յետոյ Ս. Վահան Եպիսկոպոս Յովհաննիսեան բարձր գնահատելով նուիրեալ հայորդիի վաստակը ազգային եւ եկեղեցական կեանքին մէջ, յղեց իր սրտաբուխ բարեմաղթանքներն ու օրհնութիւնը եւ Վարդան Ուզունեանի կուրծքին ամրացուց Սբ. Ներսէս Շնորհալի շքանշանը:

Պատարագին յաջորդեց ընդունելութիւն Լոնտոնի Քոթօրն Թարապանոյկին մէջ: Տօնական հանդիսութեան ներկայ էին տարբեր կազմակերպութիւններու ղեկավարներ, բարերարներ, թէքէեանցի աշակիցներ եւ մշակոյթի գործիչներ: Վարդան Ուզունեանին շնորհաւորելու եկած էին նաեւ Միացեալ Թագաւորութեան մօտ Զայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Կարինէ Ղազինեան, Զայաստանի մօտ Մեծն Բրիտանիոյ դեսպան Չարլզ Լոնստէյլ, Զայաստանի մօտ Մեծն Բրիտանիոյ նորանշանակ դեսպան Ճոնաթան Էյվզ, ինչպէս նաեւ Միացեալ Թագաւորութեան հայ համայնքի այլ ներկայացուցիչներ եւ օտարերկրեայ հիւրեր:

Շնորհաւորելով Վարդան Ուզունեանը դեսպան Կարինէ Ղազինեան իր խօսքին մէջ ընդգծեց բարերարին բեղուն գործունէութիւնն ու նուիրումը հարազատ ժողովուրդին եւ Մայր եկեղեցւոյ: Դեսպանը բարձր գնահատեց նաեւ Վ. Ուզունեանի աւանդը հայ-բրիտանական յարաբերութիւններու ալ աւելի զարգացման գործընթացին մէջ:

Ողջոյսի խօսքով հանդէս եկաւ նաեւ Զրաչ Գումրույեան (Լիբանան), որ նաեւ ընթերցեց Լոնտոնի Թէքէեան Թրասթի նախագահ, «Թէքէեան Կեդրոն» հիմնադրամի հոգաբարձու Սիլվա Գրիգորեանի շնորհաւորական ուղերձը (Ֆրանսա), որուն մէջ ան կը մանրամասներ Թէքէեան Կեդրոնի ստեղծման գաղափարը, որուն իրականացումը լի էր բազում դժուարութիւններով: Սակայն ան հնարաւոր դարձաւ շնորհիւ մէկ անձի՝ Զիմնադրամի նախագահ Վարդան Ուզունեանի, որ գոհաբերելով իր առողջութիւնը, ժամանակն ու ընտանիքը, իր

«Բացիկներ Զարան»

ՄԱՅՐԵՆԻ ԼԵՉՈՒ - ԳԼԽԱՒՈՐ ԿՆՃԻՌԸ

ՀԵՏԵՌՈՂՈՒԹԵԱՄԲ ՌՈՊԵՐ ՀԱՏՏԵՃԵԱՆԻ

Գ.

Ի՞նչ է պատճառը, որ ավելի քան տասը տարի հայկական վարժարանի մեջ հայերեն սորվող աշակերտը, երբ քանի մը տարի նուիրուել է յետոյ բարձրագոյն կրթութեան, կ'ընդգրկէ կեանքի ասպարեզ մը՝ չի յաջողիր, ո՛չ թէ սահուն ու վարժ հայերէն մը խօսելու, այլ պարզապէս կը կարկամի երկու նախադասութիւն շարայարելու իր խօսակիցին առջեւ:

Նախ ուսումնական իմաստով տրամաբանակա՞ն է այս իրողութիւնը: Կարելի՞ է երեւակայել մէկը, որ տարիներով հետեւած է լեզուի մը դասաւանդութեան, ունեցած է այդ լեզուով խօսող ուսուցիչ-ուսուցչուհիներ, հանդէսներ, արուեստի միջոցառումներ, եւայլն, եւ ի վերջոյ յանգած է գրեթէ զերօ արդիւնքի մը:

Երկրորդ, մարդկօրէն մեղք չէ՞ բոլոր այն բազմապիսի գոհողութեանց, որոնց յանձնառու կ'ըլլան հայ ծնողները՝ հայկական վարժարան ուղարկելու համար իրենց զաւակները: Ընտանիքներ կան, որոնց զաւակները դպրոց գալու համար, արեւածագէն առաջ ճամբայ կ'ելլեն եւ ինքնաշարժով մէկուկէս ժամ ճամբայ կը կտրեն, այնուհետեւ նոյնը տուն վերադառնալու համար, երբ իրենց տունէն երկու հարիւր մէթր անդին կայ ոչ-հայկական ներկայանալի դպրոց մը: Չենք յիշեր տակաւին ծնողներուն տնտեսական բաւական պատկառելի յանձնառութիւնը (կրթաթոշակի, ինքնաշարժի, ճաշի սպասարկութեան, գրեմական, եւ. . .):

Յետոյ ափսոս չէ՞ այն ջանքերուն եւ պարտաւորութիւններուն, որոնց կը դիմեն համայնքային կազմակերպութիւնները պահելու համար կրթական մեր հաստատութիւնները:

Պատճառը կը կարծես այն իրողութիւնն է, որ մեր դպրոցներու ուսումնական ծրագիրները կառուցուած են մայրենի լեզուն ուսուցանելու դասական սկզբունքին վրայ եւ ո՛չ թէ այդ լեզուով խօսելու ծրագրային նպատակին վրայ: Այստեղ կարելի է յիշել յատկանշական դէպք մը. երկրորդականի չորրորդ դասարանին մէջ եւ գործածեցի **գուլպայ** բառը, աշակերտները հարցուցին, թէ ի՞նչ է գուլպայ: Հետեւութիւն՝ մենք դպրոցի մէջ սորվեցուցած ենք բազմաթիւ բառեր, զորս աշակերտը երբեք պիտի չգործածէ կեանքին մէջ, իսկ չենք սորվեցուցած այն բառերը, որոնք մաս կը կազմեն ամէնօրեայ իր կենցաղին:

Իբրեւ հետեւանք այս իրողութեան եւ փաստօրէն՝ մեր դպրոցներէն շրջանաւարտ եղող աշակերտները **հայերէն խօսիլ չեն գիտեր**: Արդ հայերէնի ուսուցման մեր դրութիւնը հիմնուած պէտք է ըլլայ՝ աշակերտներուն **նախ եւ առաջ հայերէն խօսիլ** սորվեցնելու սկզբունքին վրայ: Այս հիմամբ ալ անհրաժեշտ է լրիւ կերպով վերատեսութեան ենթարկել ուսումնական մեր քաղաքականութիւնը:

Կարելոր է յիշել, որ ծնողները, ավելին ըլլալով հայութեան կարելոր մէկ տոկոսը **կը բաւարարուին**, եթէ հայկական վարժարան յաճախող աշակերտութիւնը որոշ չափով կարենայ արտայայտուիլ հայերէնով: Եւ եթէ վերջին տարիներուն նկատելի է աշակերտական թիւի նուազում մը մեր դպրոցներուն մէջ, այս երեւոյթը որոշ չափով պէտք է վերագրել վերի սպասումին գծով ապրուած յուսախաբութեան: Հետեւութիւնը անխուսափելի է. եթէ դպրոցը չի կրնար գոհացնել մեր ակնկալութիւնը, ինչի՞ կը ծառայէ ժամանակի վատնումը:

Յստակ է ուրեմն թնճուկը. ծնողները դպրոցէն կը սպասեն ա՛յն ինչ որ իրենք չեն կրնար տալ իրենց զաւակներուն՝ այսինքն հայախօսութիւնը (իմա՛ հայերէն խօսիլ գիտնալը), իսկ դպրոցը կ'աշխատի աշակերտներուն տալ շատ բան, բացի անկէ, որուն կը սպասեն ծնողները:

Մնաց որ հայերէնախօսութիւնը հիմնաքարն է լեզուի եւ ինքնութեան ուսուցումին: Այլապէս հայերէնի դասաւանդութիւնը կը նմանի... առանց հիմնաքարի պատ մը կառուցելու աշխատանքին, ինչ որ է այժմ:

Փաստօրէն այսօր մեր դպրոցներուն հայերէն ասանդելու աշխատանքը՝ սպանախօս (կամ անգլիախօս, ֆրանսախօս) աշակերտներուն, կը նմանի անգլի վրայ ցորեն ցանելու անպտուղ ճիգին: Եթէ դպրոցը հայերէն խօսիլ սորվեցնէր իր աշակերտներուն, այնուհետեւ շատ դիւրին կ'ըլլայ անոնց ծանօթացնել հայերէնագիտական մնացեալ առարկաները (ընթերցում, շարահիւսութիւն, գրականութիւն, եւայլն):

Մեր եզրակացութիւնն է. **Ուսուցողական բուրգին մէջ՝ նախակրթարանի առաջին գոնէ չորս կամ հինգ տարիները յատկացնել բացառապէս հայերէն խօսելու վարժութեան: Թէ ինչպէ՞ս, ատիկա մասնագետ մանկավարժներու գործն է:**

Ինչ կը մնայ երիտասարդութեան այն տարրին, որ չէ յաճախած եւ չի յաճախեր հայկական վարժարան, ի՞նչ է պատճառը, որ տրամադրութիւն կամ փափաք ցոյց չի տար հայերէն խօսիլ սորվելու:

Անշուշտ որոշ չափով անթափանցելի աշխարհ մըն է այս վերջին զանգուածը:

Տարակոյս չկայ սակայն, որ տեղական-քաղաքացիական զգացողութիւնը եւ ապագայի կապուած մասնագիտական մտահոգութիւնները ճնշիչ դեր ունին այս զանգուածի մտայնութեան մէջ: Այլապէս ալ հայերէնը եւ հայերէն գիտնալը, եթէ գոյապահպանումի համոզուածութիւն չկայ, ուրեմն զուտ տնտեսական տեսանկիւնէ դիտուած՝ չի ներկայացներ ոչ մէկ հեռանկար կամ առաւելութիւն:

Այսուհանդերձ կարելի է ենթադրել, որ այս զանգուածէն որոշ անհատեր կրնային հրապարուիլ եւ խանդավառուիլ հայերէնախօսութեան դասընթացքի մը հետեւելու գաղափարով, եթէ հրապարակի վրայ ըլլար հայերէնախօսութեան արդիական եւ գործնական մեթոտ մը, ինչ որ ունին ուրիշ լեզուներ:

Այս գծով չենք անտեսեր հիմնական եւ ուշագրաւ թերացում մը, որ կը նշմարուի հանրային մեր կառոյցներուն կողմէ. Փոխանակ դէպի հայերէնը ուղղելու նոր սերունդներու ուշքն ու հետաքրքրութիւնը, փոխանակ **պահանջելու**, որ անոնք ջանք թափեն հայերէն սորվելու, իրենք ընթացք կու տան օտարախօսութեան, այս ձեւով արագացնելով հայերէնի տեղատուութիւնն ու նահանջը:

Հանրային մեր իրականութեան մէջ քանի՞ միութիւն կրնանք յիշել, որ ձեռնարկած է կամ կը ձեռնարկէ հայերէնախօսութեան դասընթացքներ կազմակերպելու՝ գոնէ մեր լեզուին անգետ իր անդամներուն պարտադրելու, որ ընտելանան հայերէն խօսելու սովորութեան: Ծատ քիչ:

Կնճիռ մըն ալ՝ այս վերջինը:

Աւելի դիւրին է խուսափիլ կնճռոտ ճամբաներէ:

ՊԵՏՐՈՍ ՀԱՃԵԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ...

(Ծարունակուած 4րդ էջէն)

ուներուն վրայ վերցուց այդ մեծ պատասխանատուութիւնը եւ յաջող անարտի հասցուց շէնքին շինութիւնը: Տարիներ շարունակ որպէս Հիմնադրամի նախագահ Վարդան Ուզունեան իր ամէնօրեայ ուշադրութեան եւ հսկողութեան տակ կը պահէ Հիմնադրամի զարգացման գործը: ԼԹԹ եւ ԹԿԳ անունով տիկ. Գրիգորեան շնորհակալութիւն կը յայտնէր Հիմնադրամի նախագահին՝ իր նուիրումին համար:

ԼԹԹ եւ ԹԿԳ հոգաբարձու Թալին Աւագեան ջերմագին մաղթանքներէն յետոյ անդրադարձաւ նաեւ բոլոր այն դժուարութիւններուն, որոնք կը ծագէին ԹԵՔԵԱՆ Կեդրոնի ստեղծման ընթացքին: Նոյնիսկ այսօր անոնք առկայ են եւ աստիճանաբար լուծում կը ստանան մասնաւորաբար Վ. Ուզունեանի ջանքերով:

Վարդան Ուզունեան երախտիքի խօսք ուղղեց նախ Ամենայն հայոց կաթողիկոսին, ապա Ս. Վահան Եպիսկոպոս Յովհաննիսեանին՝ այդ բարձր պարգէլին իր թեկնածութիւնը առաջադրելուն համար եւ գնահատելու իր համեստ ծառայութիւնները հայ համայնքներուն՝ Լիբանանի, Եթովպիոյ, Մեծն Բրիտանիոյ եւ Հայաստանի մէջ: Ան նաեւ շնորհակալութիւն յայտնեց բոլոր այն անձերուն, որոնք տարիներու ընթացքին աջակցած են իրեն՝ իրականացնելու տարբեր ազգանուէր ծրագիրներ: Պարոն Ուզունեան անդրադարձաւ նաեւ Լոնտոնի ԹՄՄ-ի 36 տարիներու աշխատանքներուն, որոնք ճիշդ է, որ նուազած են վերջերս, սակայն շուտով կը վերականգնին: Արդէն ԼԹԹ-ի նոր կոմիտէ կը ձեւաւորուի եւ համատեղ կը ստեղծուի համացանցի կայք հետ:

Իր խօսքի վերջաւորութեան Վարդան Ուզունեան դրամահաւաք ձեռնարկեց՝ Հայաստանի եւ Արցախի ԹԵՔԵԱՆ դպրոցներու կառուցաւածքային խնդիրները լուծելու:

Հանդիսութիւնը անարտեցաւ պրն. Ուզունեանի տիկնոջ՝ Ռոզմէ Ուզունեանի ելոյթով, որ տարիներ շարունակ սատարած ու քաջալերած է գինք: Տիկ. Ուզունեան վստահութիւն յայտնեց, որ իրենք պիտի շարունակեն ծառայել հայ ժողովուրդին եւ հայ եկեղեցւոյ ու շնորհակալութիւն յայտնեց իրենց բոլոր աջակիցներուն: Միջոցառման անարտի ան ասմունքեց Վահան ԹԵՔԵԱՆԻ «Հաշուեյարդար» ստեղծագործութիւնը եւ արժանացաւ յոտնկայս ծափահարութիւններու:

ՅԻՍՈՒՆ ՏԱՐՈՒԱՅ ԱՐԳԱՍԻՔ

Մարդիկ առաւել կամ նուազ կարելութեամբ կը սիրեն տօնել իրենց ծննդեան տարեդարձը: Հաւանաբար պարզ այն պատճառով, որ կ'ուզեն արժեւորել իրենց կեանքի ընթացքին ձեռք բերած հասունութիւնը կամ պարզապէս այդ օրուայ ուրախութիւնը զգալու համար: Իսկ ինչո՞ւ միութիւններն ու հաստատութիւնները կը սիրեն մեծ շուքով տօնել իրենց ամեակները:



Սփիւռքեան իրականութեան մէջ իւրայատուկ է այս երեւոյթը, որովհետեւ մեր միութիւններուն եւ կազմակերպութիւններուն գոյութիւնը հարազատօրէն կապուած է սփիւռքահայ կեանքի սկզբնաւորութեան եւ կազմաւորման հետ: Տարեդարձ տօնել կը նշանակէ տօնել մեր առջեւ դրուած մարտահրաւերին յաղթանակը, կը նշանակէ, որ մենք դժուարին պայմանները յաղթահարելով կրցած ենք պահել եւ պահպանել մեր մշակոյթը եւ ապահովել մեր ազգային ինքնութիւնը:

Սոյն յառաջաբանէն ետք կ'ուզենք անդրադառնալ ՀԲԸՄիութեան, ՀԵԸՆկերակցութեան հովանիին ներքոյ գործող «ՊԵՏՐՈՍ ԱՂԱՄԵԱՆ» թատերախումբի ոսկեայ յոբելեանը:

Կարիքը չենք զգար ներկայացնելու այս թատերախումբին կենսագրականը, որովհետեւ վստահ ենք, որ մշակութային կեանքին հետ թէկուզ փոքր առնչութիւն ունեցող մարդիկ վայելած են անոր բեղուն գործունեութիւնը:

1961-ին կեանքի կոչուած «Պետրոս Աղամեան» թատերախումբը այսօր արժանավայել ձեւով կը տօնէ իր ոսկեայ յոբելեանը: Յիսուն տարիներու ընթացքին թատերախումբին հետ գործած վարչականներն ու դերասանները նպատակասլաց կերպով հետապնդեցին եւ աշխատեցան ապահովել անոր վերելքը դէպի նորանոր յաջողութիւններ:

Սփիւռքահայ իրականութեան մէջ մշակութային խումբերը կեանքի կոչուած են հիմնականօրէն պահելու մեր մշակոյթը եւ լեզուն ու կը կարծենք, որ թատրոնը դպրոցի կողքին լեզուի պահպանման կարելորագոյն լծակներէն մին է: Աղամեանականները փորձեցին արուեստի առումով նաեւ թատերախումբին ապահովել նոր մակարդակ եւ որակ: Հալէպահայ գաղութին մէջ անոնք եղան առաջինը, որ համագործակցեցան արհեստավարժ բեմադրիչի հետ յանձին Գրիգոր ԶԷԼԷՂԵԱՆԻ: Արհեստավարժ մօտեցումը սկսաւ մուտք գործել, ոչ միայն բեմադրիչի գործունեութեան գծով, այլ թատրոնին մաս կազմող բոլոր բաղադրիչներուն պարագային, ինչպէս բեմայարդարումի պատրաստութեան, որմագդի, յայտագիրի, միւսերէն անգամ երաժշտութեան: Յիսուն տարիներուն ընթացքին յաջորդաբար թատրոնի այս կարելոր տարրերու պատրաստութիւնը սիրողական մակարդակէն դուրս գալով դարձաւ մասնագիտական: Ապա թատերախումբին որակական նոր վերելք ապահովելու միտումով աշխատեցան հայրենի ամենէն յայտնի բեմադրիչներու հետ: Սփիւռքի իրականութեան մէջ հաւանաբար կը սեպուի միակ թատերախումբը, որ ապահովեց իր սերնդափոխութիւնը: Այսօր Աղամեան թատերախումբը ունի յիսուն տարիէն մինչեւ նուազագոյնը հինգ տարուայ փորձ ունեցող դերասաններ:

Սփիւռքի թատերախումբերուն մէջ հանդիսացաւ առաջինը, որ բեմադրեց մանկապատենական ներկայացում, նաեւ խաղաց արաբերէն լեզուով: Այս թատերախումբի գեղեցկագոյն աւանդութիւնը դարձաւ՝ հալէպահայ թատերական կեանքի նուիրուած անհատներու պարզեւտարումը արժաթեայ եւ ոսկեայ մետալներով:

Ուստի յիսուն տարուայ պատմութիւն ունեցող «ՊԵՏՐՈՍ ԱՂԱՄԵԱՆ» թատերախումբը պատուաւոր ձեւով ներկայացաւ հալէպահայ

հանդիսատեսին եւ իւրայատուկ ծրագիրով մը տօնեց իր յիսուն ամեակը:

Թատերախումբի յիսուն ամեակի առթիւ կազմակերպուած ձեռնարկներուն սկիզբն էր արխիւային ցուցահանդեսը, որուն բացումը տեղի ունեցաւ 8 Նոյեմբեր 2011-ին, ՀԲԸՄիութեան սրահէն ներս:

Ցուցահանդեսի ընթացքին ցուցադրման դրուած էին թատերախումբի տարբեր ներկայացումներու ընթացքին օգտագործուած գոյքերը, յիսուն տարուայ ընթացքին ներկայացուած խաղացանկին բոլոր որմնագղները, յայտագիրները, նկարները եւ արխիւային նիւթեր: Պարզապէս կարելի է խոնարհիլ այն անձերուն առջեւ, որոնք այսքան բծախնդրօրէն բոյն հիւսելու նման հաւաքած են այսքան արխիւային նիւթ: Հաւանաբար պետական հովանաւորութիւն վայելող կազմակերպութիւնները կրնան այսպիսի կազմակերպուած արխիւ ունենալ: Այս առումով պետք է իւրայատուկ շնորհակալութեամբ նշել Պրն. Ներսէս Տաղլեանի ջանքերը: Կը կարծեմ, որ բոլոր Աղամեանականները ինծի հետ միասին կ'երկրորդեն այն կարծիքը, որ առանց Ներսէս Տաղլեանի նուիրեալ աշխատանքին կարելի պիտի չըլլար յաջողցնել արխիւային սոյն ցուցահանդեսը: Անոր եւ Պրն. Յակոբ Միքայելեանի շնորհիւ շուտով լոյս պիտի տեսնէ «ՊԵՏՐՈՍ ԱՂԱՄԵԱՆ» թատերախումբի յիսուն տարուայ գործունեութեան նուիրուած ալպոմը:

Յիսուն Ամեակի տօնակատարութիւններուն առիթով Հայաստանէն հրաւիրուած էին թատերագետ Լեւոն Մուրաֆեանը եւ բեմադրիչ Նիկոլայ Ծատուրեանը: Հայրենի թատերագետը Հալէպի հանդիսատեսին ներկայացաւ երկու դասախօսութիւններով: Առաջինը «Հայ Թատրոնի Մեծերը», որուն ընթացքին Լեւոն Մուրաֆեան հանդիսատեսը համակեց գիտելիքներու տարափով: Ապա երկրորդ դասախօսութեան ընթացքին ան խօսեցաւ «Հայ Թատրոնի Առաքելութեան» շուրջ: Երկու դասախօսութիւններու աւարտէն ետք Աղամեանականներն ու հիւրերը ամիսսացին, որ առիթը չէին ունեցած առնչուելու այսպիսի անձնաւորութեան մը հետ:



Առանձնայատուկ ուշադրութեամբ կ'ուզենք անդրադառնալ եզրափակիչ հանդիսութեան, որ պատրաստուած էր բարձր մակարդակով: Հանդիսութեան ընթացքին Պրն. Յակոբ Միքայելեանի ղեկավարութեամբ ներկայացուեցաւ կոկիկ եւ տպաւորիչ գեղարուեստական յայտագիր մը, որուն ընթացքին ելոյթ ունեցաւ Միութեան «Կոմիտասի» անուան սենեկային նուագախումբը, Աղամեան թատերախումբի հին ու նոր դերասանները յաջորդաբար ելոյթ ունենալով ներկայացուցին թատրոնի առաքելութիւնը, կենդանի պատկեր մեր թատրոնի մեծերուն մասին: Պաշտօնական հանդիսութեան ընթացքին անգամ մը եւս ելոյթ ունեցաւ հայրենի հիւրը, այս անգամ ներկայացնելու «Պետրոս Աղամեան» թատերախումբի յիսուն տարուայ գործունեութիւնը: Ան իր խօսքի ընթացքին հիացմունքով արտայայտուեցաւ եւ բարձր գնահատեց թատերախումբին տարած գործունեութիւնը եւ արձանագրած յաջողութիւնները: Սոյն հանդիսութեան համար սրահը յարդարուած էր գեղեցիկ ձեւաւորումով, որուն պատրաստութեան համար պետք է շնորհակալութիւն յայտնել Պրն. Գօգօ Օգճեանին:

Թատերախումբի հիմնադրութեան յիսուն ամեակի առիթով պարգեւատրուեցան գաղութի թատերական կեանքին մէջ իրենց հետքը եւ

ԵՐԳԻՏԱՆՔ

Դպրոցական հանդեսի մը վերջաւորութեան հայր մը փոքրիկ տղուն ձեռքը բռնած կը մօտենայ գեղեցիկ ուսուցչուհիին.

Ուսուցչուհիին.- Ա՛ սիրելիս շատ լաւ ըրիր, որ եկար ինծի բարեւելու, շատ ազնիւ ես փոքրիկս:

Յետոյ դառնալով հօրը կը բարեւէ:

Հայրը երկար սեղմելով ուսուցչուհիին ձեռքը կ'ըսէ.

- Չաւակս մերժեց երթալ առանց բարեւելու եւ մօտէն խօսելու ձեզի հետ:

Հոս փոքրիկը կ'ըսէ.

- Բայց հայրիկ դուն էիր, որ ըսիր այս բոլորը, ոչ թէ ես:

**

Հռչակաւոր դաշնակահար Վլատիմիր Տի Բաշման Սպանիոյ մէջ ելոյթի մը ընթացքին ակնոցներուն վրայէն կը նշմարէ առջեւի շարքը նստողներէն տիկին մը, որ շատ տարօրինակ ձեւով կը հովահարէր ձեռքի հովահարը. նուագը շարունակելով եւ տիկինին ուղղելով խօսքը ան կ'ըսէ.

- Սիրելի տիկին, դուք ձեր հովահարը կը շարժէք «տուէ» զոյգ ձիթմի վրայ, մինչ ես «դրիօ» եռեակ ձիթմի վրայ կը նուագեմ, ուստի կամ դուք իմ ձիթմովս շարժեցէք ձեր հովահարը, կամ ես ձեր ձիթմով նուագեմ, որպէսզի կարենանք վերջացնել այս կտորը:

**

Շատախօս տիկին մը ընթրիքի մը ընթացքին դատախազի մը քով կը նստի ու կը սկսի պատմել անոր, թէ օր մը գող մը գողցած է իր ոսկեղէնները եւ ապա ձերբակալուած: Ինք գացած է բանտ եւ տեսակցած է գողին հետ ու ժամեր շարունակ խօսած անոր հետ, որ պետք չէ գողնալ, ինքզինք պետք է հեռու պահել գէշ սովորութենէն, կեանքի մէջ շատ լաւ ու բարի գործեր կան, եւայլն-եւայլն... Եւ այսպէս ժամերով:

Դատախազը կը հարցնէ.- Ժամերով ... իսկապէս կը խղճամ այդ գողին:

Քաղեց՝ ՏԻՐԱՆ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՅԻՍՈՒՆ ՏԱՐՈՒԱՅ ԱՐԳԱՍԻՔ

(Շարունակուած 6րդ էջէն)

Կնիքը ձգած անհատներ, ինչպէս բեմադրիչներ Գրիգոր Քելէշեանը, Վաչէ եւ Լանա Ատրուսիները, հայրենի բեմադրիչ Նիկոլայ Շատուրեանը եւ դասախօս Լեոն Մուրաֆեանը, դերասաններ Վահէ Սամուէլեանը եւ Յակոբ Միքայէլեանը: Ոսկէ մետալի արժանացաւ նաեւ քուլիսային աշխատող, իր ամբողջ կեանքն ու հոգին Ադամեան թատերախումբին նուիրած Տիկ. Անի Պասմաճեանը եւ Պրն. Ներսէ Տաղլեանը:

Յիշենք նաեւ, որ Կիրակի առաւօտ Ս. Գեորգ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ հոգեհանգստեան պատարագ մահացած դերասաններու հոգւոյն:

Օրուայ անակնկալը իր հետ բերած էր հայրենի հիւրը: Սփիւռքի նախարարութեան կողմէ պատուոյ գիրքերու արժանացան Պրն. Յակոբ Միքայէլեանը, Ներսէ Տաղլեանը, Տիկ. Անի Պասմաճեանը եւ Պրն. Ներսէ Պոյաճեանը:

Յիսուն ամեակի տօնակատարութիւնը եզրափակուեցաւ ընթրիքով մը: Նշեմ, որ այս պարզ ընթրիքն անգամ հետաքրքրական եւ հաճելի երեկոյի վերածուեցաւ՝ շնորհիւ Ադամեան թատերախումբի դերասաններ Արաքսի Մուսալլիի եւ Սմբատ Երեցեանի, որոնք կրցան շատ մտերմիկ եւ հաճելի մթնոլորտ մը ստեղծել իրենց հիւմորներով եւ կատակներով:

Նման յօդուածներու վերջաւորութեան սովորութիւն է շնորհակալութեան խօսք մըն ալ գրել այս ձեռնարկները կազմակերպող յանձնախումբին: Ի հարկէ բիր յարգանք թատերական յանձնախումբին: Բայց եկէք այս անգամ առանձնապատուկ ուշադրութեամբ յիշենք Պրն. Յակոբ Միքայէլեանի, Տիկիններ Անի Չիրիշեանի, Արաքսի Մուսալլիի, Լուսին Տաղլեան-Սանսուրի եւ Օրդ. Հրոյի Ստեփանեանի անունները, որոնց կից գործեցին նաեւ Յոբելիական յանձնախումբի վաստակաւոր անդամներ, ինչպէս Օր. Լիզա Գարամանուկեան, Ներսէ Տաղլեան, Բժ. Սմբատ Երեցեան եւ Տիկ. Սոնա Երեցեան: Այս նուիրեալները անկարելին կարելի դարձնելով, անտեսեցին ամէն տեսակ դժուարութիւն յաջողցնելու եւ արժանաւայել ձեւով հանդէս գալու հալեպահայ հանդիսատեսին առջեւ:

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍԻ ՄԷՋ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 68-ՐԴ ՏԱՐԵԴԱՐԶԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի, 20 Նոյեմբերի յետ-միջօրէի ժամը 4-ին, Պեպլուի Հիլզի Պեպլուի Հիլզին շքեղ պանդոկի ընդունելութեան սրահին մէջ տեղի ունեցաւ Լիբանանի անկախութեան 68-րդ տարեդարձի տօնակատարութիւնը:

Հակառակ տեղատարափ անձրեւին, Լիբանանի գլխաւոր հիւպատոսութեան հրաւերով, շուրջ 300 հրաւիրեալները ընդառաջած էին տօնակատարութեան հրաւերին:

Տեղական ամերիկեան մամուլի հեռատեսիլի ներկայացուցիչներու կողքին նաեւ նկատելի էր լիբանանցի եւ գաղութիս հայկական մամուլի ու հասարակական ոլորտի ներկայութիւնը ընդունման սրահէն ներս:

Ամերիկեան եւ լիբանանեան օրհներգներու ունկնդրութեամբ ընթացք առաւ օրուան պատճառ յայտագիրը, որ նաեւ սահիկներու ցուցադրութեամբ ներկայացուեցաւ Լիբանանի անկախ հայրենիքի պատմականը, ու ցուցադրուեցան անոր տեսարժան վայրերը եւ կառավարական շէնքերը:

Օրուան պատգամը փոխանցելու հրաւիրուեցաւ Լիբանանի գլխաւոր հիւպատոս՝ Մատոնա Ղազալ-Աուրը, որ իր պատգամը արաբերէն լեզուով ներկայացնելու առընթեր արտասասնեց անգլերէնով ողջոյնի խօսքեր՝ օտար ներկաներուն:

Այս առիթով Տիկ. Աուրի յանձնուեցան զանազան շնորհագրեր, որոնց կարգին նաեւ Լոս Անճելըս գաւառի գնահատագիրը:

Ապա իր ողջոյնի խօսքը արտասանելու հրաւիրուեցաւ Լոս Անճելըս գաւառի ոստիկանապետ Շերիֆ Լի Պաքան, ջերմ շնորհաւորանք մաղթելով գլխաւոր հիւպատոսութեան ու լիբանանահպատակ քաղաքացիներուն, որոնք բնակութիւն հաստատած են Լոս Անճելըսի շրջանէն ներս:

Ապա առիթը տրուեցաւ լիբանանցի ծագում ունեցող Տենիս Չայնիսին, որ անդամ է Լոս Անճելըս քաղաքի քաղաքային խորհուրդին, ներկայացնելով Սան Ֆերնանտո Հովիտի Արեւմտեան շրջանը:

Տօնակատարութեան ավարտին, Սան Տիէկո հաստատուած HOUSE OF LEBANON կառոյցի ներկայացուցիչը շնորհաւորեց հիւպատոս Աուրը եւ անոր յանձնեց յիշատակի յատուկ նուէր մը:

ԱՐԱ ԱՅՐՈՒՆԵԱՆ

ՄԱՍՆՈՅ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

VIVAcell-MTS-ը կ'առաջարկէ տօնական ցած գներ՝ BlackBerry... BoldTM 9700 եւ BlackBerry... Storm2TM 9520 սմարթֆոններու համար:

VIVAcell-MTS-ը՝ «ՄՅՍ» ԲԲԸ դուստր ձեռնարկութիւնը ուրախ է տեղեկացնելու, որ 8 Դեկտեմբերէն մինչեւ 13 Յունուար VIVAcell-MTS-ի սպասարկման կեդրոններուն մէջ BlackBerry... BoldTM 9700 եւ BlackBerry... Storm2TM 9520 սմարթֆոնները կարելի է ապահովել տօնական ցած գներով:

	Նախկին գին (դրամ)	Նոր գին (դրամ)
BlackBerry... BoldTM 9700	235000	202000
BlackBerry... Storm2TM 9520	257000	195000

Ապառիկ գնելու պարագային կը գործեն հետեւեալ պայմանները

	ամսավճար (դրամ)		
	12 ամիս	18 ամիս	24 ամիս
BlackBerry... BoldTM 9700	18519	12889	10085
BlackBerry... Storm2TM 9520	17878	12442	9735

Մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար կարելի է օգտուիլ «www.vivacell.am» կայքէն, զանգահարել 111 անվճար հեռախօսահամարին, հաղորդակցիլ մեզի հետ «111 օնլայն» փորթալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կեդրոններէն որեւէ մէկը:

Սպասեցէք ակտիւ: VIVAcell-MTS...: Աւելին՝ քան կապի գործարար:

«ՀԱՅ ՄԱՆՈՒԿԻ ՏԱՐԻ» 2011

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կիրակնօրեայ Դպրոցներու Վարիչ Տնօրէնութեան «Ծիածան» մանկապատանեկան թատերախումբը կը ներկայացնէ «Հայ Մանուկին Կաղանդ Պապուկը» խորագրով երգախառն թատրոն մը. գլխաւոր կատարողութեամբ՝ Աստղ փոքրիկներ

Նայիրայի ու Լորիի

եւ մասնակցութեամբ արհեստավարժ տիպարներու

Հեղինակ եւ բեմադրութիւն **Յարութ Հարպոյեանի**
Երաժշտական սարքաւորում **Սեդո Պաղտասարեանի**

Տեղի կ'ունենայ Շաբաթ 17 եւ Կիրակի 18 Դեկտեմբեր 2011-ին, կ.ե. ժամը 4:30-ին, Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ:
Աշակերտական ելոյթներ՝ Կիրակի 18 եւ Երկուշաբթի 20 Դեկտեմբեր 2011-ին, առաւօտեան ժամը 11:00-ին:
Տոմսերը կարելի է ապահովել կաթողիկոսարանի, Համազգայինի եւ Նարեկացի գրախանութներէն, Disco Young-էն եւ ելոյթի օրերը կիշէն

Սակ՝ 7000 եւ 5000 Լ.Ո.

ԳՐԱՒՈՒԱԾ ՕՐ

ՀԲԸՄ-ՀԵԸ
Կեդրոնական Վարչութիւն
28 Յունուար 2012




ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թեքէեան Մշակութային Միութեան Տեղական Վարչութիւնը այսու կը դիմէ լիբանանահայ բոլոր հրատարակչատուններուն եւ հեղինակներուն, որ բարի ըլլան 2011 տարուան ընթացքին լոյս տեսած գրական-գեղարուեստական-պատմաբանասիրական բովանդակութեամբ երկերէն Միութեանս տրամադրել մէկական օրինակ, որպէսզի 2011-ի գրական հունձքի հանդիսութեան կարելի ըլլայ ներկայացնել զանոնք:

Կանխայայտ շնորհակալութիւններ:

ԿԱՐՉՈՒԹԻՆ

Ս Տ Ա Ճ Ա Ն Ը



ԱՍԴՐԻՏ ԼԻՆՏԿՐԵՆ

ՄԱՆՉՈՒԿԸ ԵՒ ԳԱՐԼՍՈՒՆԸ,
ՈՐ Կ'ԱՊՐԻ ՏԱՆԻՔԻՆ ՎՐԱՅ



ԲԵՄԱԴՐԻՉ՝ ԼԱՆԱ ՔՈՉԱՐԵԱՆ-ԱՏՐՈՒՆԻ

Դեկտեմբեր 1-էն սկսեալ
Յ. Տէր-Մելքոնեան թատերասրահ



ԿԻՐԱԿԻ, 11 ԴԵԿՏԵՄԲԵՐ

կեսօրէ ետք ժամը 4:00-ին:

Ելոյթներու տոմսերը ստանալ կիշէն:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ողբ. ընկ. ԿԱՐԱՊԵՏ Կ. ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 11 Դեկտեմբեր 2011-ին, Ս. Նշան մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ս. Էջմիածնի Կրօնատէր Տիկնակց Համախմբումի ննջեցեալ հիմնադիրներու եւ անդամներուն, ինչպէս նաեւ Սպիտակի աւերիչ երկրաշարժի անմեղ զոհերուն յիշատակին հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 11 Դեկտեմբեր 2011-ին, Ս. Նշան մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

«ՏԻԳՐԱՆ» ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Թաղման եւ յուղարկաւորութեան ծառայութիւն
Էշրեֆիէ, Օթել Տիէօ հիւանդանոցին դիմաց եւ Պուրճ Համուտ,
Ս. Աստուածածին եկեղեցւոյ կից

ԿԱՐՕ-ՏԻԳՐԱՆ: Հեռ. 03-892896:

Our e-mail addresses are:



info@zartondaily.com
zartondaily@yahoo.com
zartonkadl@gmail.com